



WESTERN DIOCESE OF
THE ARMENIAN CHURCH OF NORTH AMERICA

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմ

HIS EMINENCE ARCHBISHOP HOVNAN DERDERIAN, PRIMATE

2 Յոկտեմբեր, 2023

**ՄՐՏԱԳԻՆ ԿՈՉ ԹԵՄԻՍ ՀԱԲԱՏԱՑԵԱԼՆԵՐՈՒՆ
ԱՐՑԱԽԱՎՅԱՅ ԳԱՂԹԱԿԱԼԱՅ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԵԱՆ Ի ՆՊԱՍՏ**

Սիրելի՛ հայրորդիք,

Բոլորս ալ իրազեկ ենք, թէ ինչ կատարուեցաւ Արցախահայութեան հետ վերջին շաբաթներու եւ օրերու ընթացքին: Մեր 100,000-է աւելի Արցախահայ քոյրերն ու եղբայրները բռնի տեղահանութեան զոհ դարձած են եւ այժմուս Հայաստան կը գտնուին: Փառք Աստուծոյ, որ ցեղասպանութենէ մազապուրծ մեր հայրենակիցները՝ տառապեալ եւ սգաւոր, Մայր Հայաստանի մէջ իրենց անմիջական հոգածութիւնը կը ստանան պետական աջակցութեան, միջազգային եւ տեղական կազմակերպութիւններու եւ անհատ բարերարներու շնորհիւ՝ անշուշտ նաեւ զօրակցութեամբ մեր Ս. Եկեղեցւոյ, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի:

Մեր ազգի պատմութեան մէջ խոր ցաւ պատճառող իրավիճակ է ասիկա եւ մեր բոլորիս հոգու պարտքն է օգնութեան ձեռք մեկնել Արցախահայութեան, ովքեր այսօր խիստ կարիքներու մէջ են:

Արդ, մեր սրտագին խնդրանքն է, որ Ձեր առ Աստուած բարձրացրած աղօթքները հայրենիքի խաղաղութեան եւ բարօրութեան համար նաեւ գործնական արտայայտութիւն ունենան մարդասիրական առաքելութեանն ի նպաստ նուիրաբերումներով:

Արցախահայ գաղթականներուն օգնութեան նպատակով Ձեր սրտաբուխ նուէրը կրնաք ուղարկել հետեւեալ հասցեով.

To: Western Diocese of the Armenian Church of North America

3325 N. Glenoaks Blvd

Burbank, CA 91504

Memo: Artsakh Refugee Fund

Ներփակ՝ կը գտնէք ծրար մը նոյն նպատակին համար:

Թող Աստուած վարձահատոյց ըլլայ Ձեզ եւ մշտապէս օրինէ բարի կամեցողութեան եւ հայրենասեր ոգու համար:

Մնամք սիրոյ ողջունիւ,

Աղօթարար՝

Յովնան Արք. Տէրտէրեան, Առաջնորդ
Հիւսիսային Ամերիկայի Արեւմտեան Թեմի